

**Տիգիկայի հանրապետական օլիմպիադա  
Տևողությունը 3 ժամ**

**Փորձարարական փուլի խնդիրները**

**10-11 Դասարան**

1. Գտնել մագնիսական ժապավենի հաստությունը և խտությունը: Կոճերը, որոնց վրա այն փաթաթվում է, ունեն 11 մմ շառավիղ, ձայնաերիզի լրիվ զանգվածը՝ 40 գ., ժապավենի լայնությունը 3,9 մմ:

Տրված սարքեր՝ մագնիսական ձայնաերիզ, գրիչ, քանոն:

2. Հետազոտել անոթի հովացումը սենյակում: Ապացուցել, որ ջերմային կորուստները ուղիղ համեմատական են ջրի և սենյակի ջերմաստիճանների տարբերությանը: Որոշել սենյակի ջերմաստիճանը: Ինչպե՞ս է ազդում ջերմային կորուստների վրա անոթի վրա փաթաթած այլումինե թիթեղը:

Սարքեր՝ տաք ջրով անոթ, ջերմաչափ, վայրկյանաչափ, այլումինե թիթեղ: